

**ՀԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒՂԱՐԻԱ.
ԱՆՁՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիրաժողովի գեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅ-ԲՈՒՂԱՐԱԿԱՆ ՇԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-2008 թ-թ.

Հայ-բուղարական հարաբերություններն ունեն լավ ավանդույթներ, որոնք ձևավորվել են դարերի ընթացքում: Նորագոյն ժամանակներում այդ հարաբերություններն ապրեցին նոր զարգացումներ: Դիմանալով պատմության բազում փորձությունների նրանք արձանագրեցին բարեկամության և փոխադարձ վստահության նոր էջեր:

1991թ. սեպտեմբերի 21-ը մեր պատմության բախսդրող դարերվերից է: Այդ օրը՝ հայ ժողովողի կամքով, նրա հերոսական ջանքերով, Խորհրդային Միության վկարակների վրա հառնեց հայոց նոր պետքականությունը: Անկախության հոչակումից հետո Բուղարիայի հանրապետությունը առաջին պետություններից էր, որը ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Շարք չանցած՝ 1992թ. դիվանագիրական հարաբերություններ հասպարվեցին երկու երկրների միջև:

Ի սկզբանե նորանկախ Հայաստանի Հանրապետության արդարին քաղաքականությունը հենվեց հեքևալ կարևորագոյն սկզբունքի վրա, որ պետքության և ժողովրդի անվտանգությունը խարսխված է բոլոր մոլորդիկ և հեռավոր հարևանների հետ հարաբերությունների նորմանացման վրա:¹ Ելեկով այս հիմնադրույթից Հայաստանի նորանկախ Հանրապետությունը եռանդրուն քայլեր ձեռնարկեց իր հեռավոր արևմտյան հարևանի՝ Բուղդարիայի հետ դիվանագիրական հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ: Ըստ եռաջան՝ հայ-բուղարական հարաբերությունները նոր որակական մակարդակի հասան հայկապես Հայաստանի Հանրապետության անկախացումից երրորդ համարական պարունակություն հոչակումից հետո: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. առաջին հերթին՝ բուղարահայ համայնքի քանակական աճով ու սրբարացմամբ և երկրի հասարակական-քաղաքական լյանքում նրա ակրիվության աճով: Այս առումով պատահական չէ ԲՀ վարչապետ Ս. Ստանիչևի հայդարարությունը 2007թ. նոյեմբերին Երևանում պաշտոնական այցի ժամանակ՝ «Հայերը Բուղարիա եւսան դժվար և ողբերգական տարիներին, իրենց համար շար ծանր իրավիճակում և կարողացան Բուղարիան ընդունել իրենց հայրենիքը, հաջողությամբ ինքնեզրկվել բուղարական հասարակությանը և ներդրում կապարել: Բուղարիայի հայերն այսօր կամուրջ են մեր երկու պետությունների միջև»:² Դեռևս 1989թ. նոյեմբերին Բուղարիայի կոմու-

նիստական վարչակարգի փապալումից հետո երկիրը թևակոխնց ժողովրդական բարեկոհումների շրջան: Այդ գործում իր ուրույն դերակարարությունը ունեցավ նաև 50.000-ոց բուլղարահայ համայնքը:³ Նրա մի սրբար հարվածը 35.000-ից ավելին, Բուղարիայի հանրապետություն գեղագիտական Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո: 1990-ական թթ. սկզբին Ազգային զարթունքի ժամանակաշրջան սկսվեց նաև բուղարահայ համայնքի լյանքում պայմանավորված ինչպես երկրում գեղի ունեցող արմագական վերափոխումներով, այնպես է դարապայական շարժման և Հայաստանի Հանրապետության անկախացման անմիջական ներգործությամբ: 1990-1991թթ. Բուղարիայի հանրապետությունում հիմնվեցին հայկական նոր միություններ և կազմակերպություններ, վերսկսեցին իրենց գործունեությունը ՀԲՀՍ (Հայկական բարեգործական ընդհանուր միություն), ՀՄՀՍ-ի (Հայ մարմանակրթական ընդհանուր միություն), ՀՕՄ-ի (Հայ օգնության միություն) մասնաճյուղերը, իսկ Պլովդիվում սկսեցից Հանազգային Մշակութային միության մասնաճյուղ: Սոֆիայում, Պլովդիվում, Ռուսեում վերաբացվեցին հայկական վարժարանները, վերականգնվեց արևմտահայերենի ուսուցումը: Պլովդիվում, Սոֆիայում, Վառնայում սկսեցիցին «Զորավար Անդրանիկ» երիտասարդական միության գեղարդական մասնաճյուղերը, գործեցին կիրակնօրյա դպրոցներ, շարունակվեց բուղարերեն և հայերեն լույս գետնել «Երևան» թերթը, Վառնայում հիմնադրվեց նաև «Արարափ» երիտասարդական միությունը, 1990-1991թթ., Պլովդիվում «Արաք» բարեգործական կազմակերպությունը, գործեց քաղաքի հայ մշակութային տունը, լույս գետնավ «Հահան» շաբաթաթերթը, Վառնայում հիմնադրվեց կանանց միությունը: Բուրգասում գործեց կիրակնօրյա դպրոց, իսկ 1993թ. դեկտեմբերից լույս գետնավ «Հայեր» թերթը (բուղարերեն և հայերեն):⁴ Բուղարիայի համայնքի ազգային լյանքի աշխուժացմանը մեծ չափով նպաստեցին 1990-ական թթ. առաջին կեսին Հայաստանի Հանրապետությունից եկած բազմաթիվ հայերը, որոնք հիմնականում կենքրունացան Սոֆիայում (2.000), Պլովդիվում (9.000), Վառնայում (5.000), Բուրգասում (2.000), Ռուսեում (2.000):⁵ Փոքրաթիվ հայկական համայնքներ առաջացան նաև Խասկովո, Պազարջիկ, Շումեն, Սիլիվրա, Սլիվեն և Ստրադ Զագորիա քաղաքներում:⁶ ԲՀ-ն՝ լինելով ԵՄԿ նախագահող երկիր, մասնակցելով Պրահայի գործընթացին աջակցում է Մինսկի խմբի աշխարհներին Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ ուղղով լուծման գործին:

Անժխափելի է նաև այս համգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունն ու Բուղարիան ներկա աշխարհի իրողություններում ունեն

բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր, առանձին դեպքերում նույնիսկ համանման խնդիրներ, փարբեր գլուխակի ընդհանրություններ, վերջապես, պարմական ավանդական կապեր: Անկանած է, որ Բուլղարիայի հանրապետության շահերը պահանջում են ամրապնդել Հայաստանի Հանրապետության պետքական անկախությունը, ընդգրկել այն իր փարածաշրջանային քաղաքականության ոլորտը, օգտագործել նրա ճյուղավորված կապերն ԱՊԴ երկրների, մասնավորապես Ռուսաստանի Հաշվության հետ, օգդվել հայ Սփյուռքի աշակցությունից՝ Արևմուրակում բուլղարանապատ իմիջ սփեղծելու համար, համագործակցել Հայաստանի Հանրապետության հետ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների շրջանակներում և այլն: «Հայաստանը կարևորում է երկու երկրների սերդ գործակցության անհրաժեշտությունը ինչպես Եվրոպական կառույցների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում Անծովյան փարածաշրջանում երկողմ և բազմակողմ համագործակցության զարգացման հարցերում», - հայրարքեց ՀՀ արքագործնախարար Վ. Օսկանյանը 2007թ. հունվարի 10-ին Բուլղարիայի նորանշանակ դեսպան ժողով Մարինով Սփյուռքի հավաքարմագրերի կրկնօրինակն ընդունելիս:⁷ Երկու երկրների հարաբերությունների զարգացմանը նոր խթան հաղորդեց այն հանգամանքը, որ 2007թ. հունվարի 1-ից Բուլղարիան, դառնալով Եվրոմիության անդամ երկիր, նախագետներ իր յուրաքանչյուր փարի իր համախառն ներքին արդյունքի 0,17% հարկացնել ԵՄ անդամակցող երկրներին և այդ ծրագրի շրջանակներում պարբռաստ է գումարներ փրամադրել նաև Հայաստանի Հանրապետությանը՝ հանապարհանան ծրագրերի առկայության պարագայում.⁸ Այս հանգամանքը ևս կարևորում է Բուլղարիայի Հանրապետության դերը անկախ Հայաստանի Հանրապետության կյանքում: Վերնշյալ գործուները խթան հանդիսացան Հայաստանի հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև հարաբերությունների վերընթաց զարգացման համար:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո առաջնահերթ խնդիր դարձավ հայ-բուլղարական քաղաքական հարաբերությունների զարգացումը: Գնահատելով այդ հարաբերությունների կարևորությունը երկու երկրների համար Բուլղարիայի Հանրապետության վարչապետը Սեպեն Սփանչը 2007թ. նոյեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետություն այցելելուց հետո հայքարարեց, որ - «քարձը է զնահարկում հայ-բուլղարական հարաբերությունների ներկա մակարդակը, քարձը մակարդակի է հասել քաղաքական երկխոսությունը երկու երկրների միջև»:

50

Բոլոր ոլորդներում առկա են բարենպաստ նախադրյալներ դրանց զարգացման համար: Բայց իսկու պարմական արմագներից մենք կապված ենք նաև Եվրոպական և Եվրական կառույցների ինքնոգրման ընդհանուր նպատակով: Այդ համագործակցությունն ամրագրվել է Եվրոպական ինքնոգրացիայի և Եվրական կառույցներում համագործակցության 2005թ. սպորտագրված հուշագրով»:⁹ Այդ միջկառավարական հուշագիրը սպորտագրվեց դեկտեմբերի 7-ին Բրյուսելում Բուլղարիայի դեսպանությունում ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի և ԲՀ ԱԳ նախարար Ի-վայլֆինի միջև: Նույագրով կողմերը պարբռաստակամություն էին հայդրում շարունակել ակիրկ համագործակցությունը ԵԱՀԿ շրջանակում և ամրապնդել կազմակերպության դերը՝ որպես հակամարդությունների կարգավորման միջոցի ԵԱՀԿ փարածաշրջանում, ներառյալ Հարավային Կովկասում: Կողմերը պարբռավորվում են նաև խթանել փոխադարձ համագործակցությունը Եվրոպական ինքնոգրացիայի բնագավառում՝ ուղղված ՀՀ և ԵՄ միջև գործընկերության հաջող զարգացմանը և աջակցել ՀՀ ձգիմանը զարգացնելու համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ: Նույագրով նախադեսվում էր նաև համագործակցություն ծավալել Եվրոպական համագործակցության քաղաքականության շրջանակում Հայաստանի Հանրապետության հնարավորությունների լիարժեք օգրագործմանն ուղղված գործողությունները զարգացնելու նպատակով:¹⁰ Բայց այդ ԲՀ համար կարևոր է նաև Անծովյան փարածաշրջանի համագործակցությունը, Անծովյան փարածաշրջանում ԵՄ ռազմավարության իրականացումը, որը կոչվում է «Անծովյան համագեղ ջանքեր» և ընդունվել է Բուլղարիայի ակիրկ մասնակցությամբ 2007թ. ասքիլին: Այս ոլորդում նոյեմբեր որպես գործընկերներ հակուկ ծրագրի մշակմամբ և իրականացմամբ ևս զարգանում են երկու երկրների փոխհարաբերությունները: Բարձր է գնահարվում հարկացն վերջին 5 փարիներին երկու երկրների բարձրագույն ներկավարության միջև քաղաքական երկխոսությունը: Հայքին է, որ 2003 թվականից հետո կայացալ երկու երկրների նախագահների՝ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի և ԲՀ նախագահ Գևորգի Պրկանչովի (2003 և 2007թթ.), խորհրդարանների նախագահների՝ ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի և ԲՀ ժողովրդական ժողովի նախագահ Գևորգի Պիրինսկով (2004 և 2006թթ.) փոխայցելությունները, ինչպես նաև Բուլղարիայի Հանրապետության վարչապետի՝ Սերգեյ Սպանիչի՝ անցած ավելի քան մեկուկես դասնամյակի ընթացքում առաջին պաշտոնական¹¹ եռօրյա այցը Հայաստան Հանրապետության 2007թ. (նոյեմբերի 13-16-ը):¹² Միայն վերջինիս այցի ընթացքում Երևանում երկու երկրների 13-16-ը):¹² Միայն վերջինիս այցի ընթացքում Երևանում երկու երկրների

վարչապետները՝ Ս. Սփանիշևը և Ս. Սարգսյանը 5 միջկառավարական պայմանագրեր կնքեցին, որոնք ավելի խթանեցին հայ-բուլղարական հարաբերությունների զարգացումը:¹³

Առանձնակի կարևորվում է երկու երկրների միջև միջխորհրդարանական կազմերի զարգացումը: Դեռևս 2004թ. ապրիլ և հունիս ամիսներին ՀՀ ԱԺ նախագահ Վլադիմիր Բաղդասարյանը և Բուլղարիայի ԲՆ ժողովուրդական կազման ժողովի նախագահ Գեորգի Պիրինսկին իրենց պաշտոնական այցերի ընթացքում քննարկեցին քաղաքական, միջխորհրդարանական, օրենսդրական փորձի փոխանակման շորջ համագործակցության խնդիրներ: Փոխադարձաբար կարևորվեցին հարկադարձության համագործակցության խնդիրները: Դեռևս 2006թ. ամռանը Հայաստան-Բուլղարիա Ադրիատիկ ծովի և Դանուրի երկրների բրանսպորտային խնդիրներով կոնֆերանս կազմակերպելու մասին որոշումը՝ երկու խորհրդարանների հովանու ներքո: Փոխադարձ հանդիպումների ընթացքում քննարկեցին նաև միջարածաշրջանային համագործակցության շարունակման և զիգարեթական ու կրթամշակութային կազմերի ամրապնդման հարցերը: Անդրադարձ է եղել նաև միջկուսակցական կազմերի ծևափորման և ամրապնդման խնդիրներին: Խորհրդարանների նախագահների առանձնագործոցից հետո Գեորգի Պիրինսկու զիսավորած խորհրդարանական պարփիրակությունը հանդիպեց Ազգային ժողովի հանճնաժողովների նախագահների, խմբակցությունների ղեկավարների հետ: Նույնը իրականացրեց ՀՀ ԱԺ խորհրդարանական պալովիրակությունը Բուլղարիայում: Բուլղարիայի խորհրդարանը վավերացրեց ՀՀ և Բուլղարիայի Հանրապետության միջև հյուպարուսական կոնվենցիան, որը ՀՀ խորհրդարանը վավերացրել էր 2004թ. ապրիլի 26-ին: Այն հեշտացնում էր քաղաքացիների որոշ խմբների համար ելքն ու մուգքը:¹⁴ Փաստորեն, 2004թ. փոխադարձ այցելությունների արդյունքում արձանագրվեց, որ 1999թ. ի վեր խորհրդարանական նման բարձր մակարդակի այցեր չեն եղել, որին Բուլղարիայի Հանրապետության իշխանությունները մեծ կարևորություն փալով ընդուն են, որ դրանք կարող են մի քայլ առաջ դանել բուլղարա-հայկական միջամտական հարաբերությունները:¹⁵ Միաժամանակ կարևորվեց համագործակցությունը մարգերի և քաղաքների միջև, առողջապահության, զիգարամշակութային ոլորտներում, ինչպես նաև բուլղարական օրենսդրական փորձի օգիագործումը և համագործակցությունը՝ միջխորհրդարանական կառույցներում:

2007թ. նոյեմբերին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը, ընդունելով Բուլղարիայի վարչապետ Ս. Սփանիշևին, հիշարկեց երկու երկրների ու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, գոհունակություն հայքներու միջամտական հարաբերությունների զարգացման մակարդակից՝ իրազեկելով, որ Ազգային ժողովում արդեն սպեղծվել է Բուլղարիայի խորհրդարանի հետ պարզամապնդրական բարեկամության խումբ:¹⁶ Զննարկեց նաև ՀՀ և ԲՆ խորհրդարանների միջև համագործակցության համաձայնագրի հարցը, որը իրավական եիմք է հանդիսանում բարեկամության խմբերի, մշտական հանձնաժողովների, աշխատակազմերի միջև կազմերի զարգացման համար: ՀՀ ԱԺ նախագահը կարևորություն ունի քայլերը, որ պիտի հետքեն համաձայնագրի սպորտազրմանը՝ կրնկրելով աշխատանքը թե՛ միջխորհրդարանական հարաբերությունների ոլորտում և թե՛ միջազգային կառույցներում: Փոխադարձաբար արժեվորվեցին երկողմանի կապերի խորացումը, օրենսդրական փորձի փոխանակումը, երկու երկրների խորհրդարանների համերաշխությունն ու համագործակցությունը:

Ի շարունակում փոխայցերի՝ ԱԺ նախագահը, ընդունելով Բուլղարիայի խորհրդարանի նախագահի իրավերը, 2008թ. պաշտոնական այցով կիմի Սոֆիայում: Բուլղարիայի Հանրապետության վարչապետը, արձանագրելով երկու երկրների բարեկամական հարաբերությունները, նշել է, որ կառավարությունները և խորհրդարանները փոխվում են, այդուհանդեմ, մշտական մնում է բարեկամության և համագործակցության մթնոլորտը, որը զարգացման կարևոր նախադրյալ է:¹⁷

ԲՆ վարչապետը, ներկայացնելով ՆԱՏՕ-ին և Եվրոմիությանը անդամակցության բուլղարական փորձը, նշեց, որ խորհրդարանը աշխատել է առանց հանգստյան օրերի՝ միայն այդ խնդրով 120 օրենք ընդունելով, այդ գործնթացը ավարտելուն նախորդել է դժվար և արդյունավետ աշխարհանք՝ երկրի պետական կառավարման համակարգը եվլուսական շահանիշներին համապարախսնեցնելու նպարակելով և կուտակելով է հարուստ փորձ, որը Բուլղարիան պարփասդ է հայկական կողմին փոխանցել: Քանի որ Բուլղարիան խորհրդարանական հանրապետություն է, երկրում մեծ է խորհրդարանի դերը և միջխորհրդարանական հարաբերություններին մեծ գեղ է փրկում, ուստի կարևորվում է ՀՀ-ի հետ խորհրդարանական կապերի զարգացումը: Երկու երկրների միջև սերդ փոխարաբերություններ են սպեղծվել նաև կառավարությունների մակարդակով: Սպեղծվել և գործում են միջկառավարական հանձնաժողովներ, որանց

ընդունած որոշումները նպաստում են երկու երկրների քաղաքական, գի-
ֆարմենիկական, կրթական, մշակութային և առևտրաժնութեական հա-
րաբերությունների զարգացմանը: 2008թ. փերփարին ուժի մեջ մրավ
ՀՀ-ի և ԲՇ-ի միջև առևտրափառքական և գիֆարմենիկական համա-
գործակցության միջկառավարական համաձայնագիրը, որի հիման վրա մարդին արդեն բուլարական կողմին
ներկայացվեց հանձնաժողովի հայկական կողմի կազմը: Միջկառավա-
րական հանձնաժողովների համարելա աշխարհանքները խթան հանդի-
սացան գնդեսական և գիֆակրթական ու մշակութային փոխգործակ-
ցության ակդիվացման համար:

Հայաստանի Հանրապետությունը և Բուլղարիայի Հանրապետութ-
յունը դարձել են միմյանց համար կարեռագույն առևտրական գործըն-
կերներ: Երկու երկրների անդամակցությունը Առևտրի համաշխարհային
կազմակերպությանը լրացուցիչ նպաստավոր գործոն էր առևտրական
կապերի զարգացման համար: Հարկապես վերջին 5 տարիներին փնտե-
սական կապերը ավելի ինքնենսիվ են զարգանում: Երկու երկրների ապ-
րանքափոխանակման ծավաներում նշանակալի աճ է արձանագրվել: Միայն 2007թ.
այն կազմել է 30 մլն դրամ: Սակայն այն չի գոհացմում եր-
կու երկրների վարչապետներին: Պարահական չէ, որ ԲՇ-ի վարչապետը
Հայաստանի պաշտոնական այցից երկու օր առաջ ասաց. «Ավանդա-
րար զարգացող լավ հարաբերությունների դեմքնայունից կարծում եմ, որ
ապրանքաշրջանառությունն իր ծավալով և բազմազանությամբ չի համա-
պատասխանում մեր ներուժին և ենթաքրքրություններին, - ապա ավել-
իացրեց, որ - այդ է պահճառը, որ Հայաստան այցից ընթացքում մեծ շեշ-
գործում է կարարվելու դեմքնական և առևտրային կապերի ընդլայն-
ման համարելա միջոցների ծեռնարկման ուղղությամբ»:¹⁸

Դեռևս 2007թ. հունիսին ԲՇ նախագահ Գ. Դրվանովի երավերով ԲՇ-
ում գրնվող ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը գոհունակություն էր հայքնել
վերջին փարիներին երկու երկրների միջև քաղաքական երկխոսության
զարգացման աշխուժացման առնչությամբ, սակայն, խոսելով առևտրի և
փնտեսական հարաբերությունների մասին, նշել էր, որ դրանք դեռևս բա-
վարար մակարդակի վրա չեն քաղաքական համագործակցության համե-
մար, ուստի ինդիք էր դրվել ակդիվացնելու այդ ոլորսի զարգացման
հնարավորությունները: Տնտեսական հարաբերությունների ոչ բավարար
զարգացման պահճառներից մենք երկու երկրների նախագահները հա-
մարել են օդային հաղորդակցության անբավարար մակարդակը Հայա-
ստանի Հանրապետության և Բուլղարիայի մայրաքաղաքների միջև:¹⁹

Երկու երկրների նախագահները պարագաները պարագաներուն հայդնե-
ցին նպաստելու գործադրի իշխանություններին այդ խնդրի լուծման հար-
ցում: Պարահական չէ, որ 2008թ. փերփարին սպեղծվեց ՀՀ և ԲՇ
առևտրափառքական և գիֆարմենիկական համագործակցության միջ-
կառավարական հանձնաժողով, որի շղանակներում կազմակերպվեցին
երկու երկրների գործարարների հանդիպումներ, համագործակցություն-
ներ նախարարությունների միջև, երավիրկեցին բիզնես ֆորումներ, որոնց
արդյունքում սպեղծվել է բիզնեսի համար բարենպաստ միջավայր, որի
հետագա զարգացումը երկու երկրների ձեռներեցների ինտիմն է: Ինչպես
նշվեց ԲՇ վարչապետի կողմից ՀՀ կարարած այցի ընթացքում «Երկու
երկրների փնտեսական զարգացման դինամիկան թերևս գոհացուցիչ է,
բայց թվերը չեն համապատասխանում եղած հնարավորություններին: Մենք ՀՀ-ն դիմում ենք որպես Բուլղարիայի հեռանկարային փնտեսա-
կան գործընկեր, որի հետ կարող ենք զարգացնել փնտեսական լայն հա-
րաբերություններ»:²⁰ ՀՀ վիճակագրական ազգային ծառայության դվյալ-
ների համաձայն 2007թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ԲՇ-ի հետ ՀՀ-ի
ապրանքաշրջանառությունը կազմել է 120,5 մլն դրամ՝ ավելա-
ցել է 3,4 անգամ: Ընդ որում, ՀՀ-ից ԲՇ է արդահանվել 43,9 մլն դրամ
արժողությամբ ապրանք՝ 17,9 անգամ գերազանցելով անցած դարվա-
նույն ժամանակաշրջանի մակարդակը: Միաժամանակ նույն ժամանա-
կաշրջանի արդյունքներով ԲՇ-ից ՀՀ ապրանքների ներկրումն աճել է 1.5
անգամ՝ հասնելով մինչև 26.7 մլն դրամի, իսկ ԲՇ արդարության ապ-
րանքների ներկրումը աճել է 2,2 անգամ՝ կազմելով 76,6 մլն դրամ:²¹

Հայաստանի Հանրապետությունը Բուլղարիայից մեծ քանակությամբ
նավթամթերք է ներկրում, բայց, ինչպես նշեց ՀՀ վարչապետ Ս. Սարգսյա-
նը «մեր երկիրը ունի արդարությունը, որը կարող է մեծ պահանջարկ ունենալ
Բուլղարիայի շուկայում»:²² Այդ առթիվ սպեղծված միջկառավարական
հանձնաժողովը 2008թ. փերփարին անցկացրած բիզնես-ֆորումում նշվե-
ցին այն ծրագրերն ու ուղղությունները, որոնք նախագիրու են առևտրափառ-
նության կապերի ընդլայնմանը: ՀՀ անկախության 17 փարիների ըն-
թացքում կնքվել են 40-ից ավելի համաձայնագրեր, որոնք առնելում են
փնտեսական ոլորսին և գիֆարմենիկական համագործակցությանը:

Ինչպես նշեց ԲՇ վարչապետ Ս. Սարգսյանը 2007թ. նոյեմբերին Երևա-
նում «ՀՀ-ն բավական զարգի կարող է լինել Բուլղարիայի գործարարների
համար: Ուստի ԲՇ-ն պետք է ներդրումներ կարարի ՀՀ փնտեսության մեջ: Դրա
համար անհրաժեշտ է, որպեսզի միջկառավարական հանձնաժողովի
նիստերին ներդրապետ նաև գործարար շրջանակները, որպեսզի փնտեսվա-

բոլ սուբյեկտներն իրենք գփննեն փոխադարձ շահեր և համագործակցության եզրեր»:²³ Բուլղարիայի հանրապետությունը վերջին փարիներին փարեկան միջին 6 դրվու գնդեսական աճի պայմաններում, « համապատասխան նախարարությունների հետ հանդես եկավ հետաքրքիր նախաձեռնություններով՝ էներգետիկայի, դրանսպորտի, զյուղագինդեսության և այլ ոլորդներում համագործակցության վերաբերյալ:

Բուլղարիայի փնտեսությունն ունի որոշակի կարողություն ընդլայնելու մի շարք ապրանքապեսակների՝ մեխանիկական և էլեկտրոնային ինժեներության, սննդի արդարության սարքավորումների, վերելակային և փոխադրող հարմարանքների, դեղամիջոցների, հարդարման կոսմոնաբիկ միջոցների, հագուստի, սննդամթերքի և այլ ապրանքների մարդակարարումը, որոնք լավ հասպարզված են համաշխարհային շուկայում։ Բուլղարական շուկան միևնույն ժամանակ ազարականացված է՝ առանձնանալով արագորեն աճող սպառողականությամբ և բաց է մրցակցային ապրանքագիրների ներմուծման համար փարբեր երկրներից, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը։

ԲՀ-ի և ՀՀ-ի համար երկուստեղ խրախուսելի են փոքր և միջին գործարարության ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ծրագրերը, որոնք ուղղվելու են երրորդ երկրների շուկաներ, Հայաստանյան բիզնեսում՝ դեպի Բալկաններ և ընդարձակ Եվրոպական շուկաներ և բուլղարական բիզնեսը՝ Հայաստանի Հանրապետության գործենկերներ Ռուսաստան, Իրան, Կենտրոնական Ասիա: Այս ոլորտում լավագույն օրինակ է Երևանին մոտ մեծ մասամբ բուլղարական գենիսիկական աջակցությամբ և սարքավորումներով կառուցված գինու, կոնյակի գործարանը, որի արդարադանքը հիմնականում ուղղված է դեպի Ռուսաստան, և ՎՊԴ մի քանի այլ երկրներ: ԲՀ-ի և ՀՀ-ի միջև 2007թ. նոյեմբերին ստորագրվեց մի շարք համաձայնագրեր գրոսաշրջության, էներգետիկ արդյունաբերության, զյուղագրներության, հարկավես անասնապահության ներդրումների վերաբերյալ: ԲՀ-ի և ՀՀ-ի նախարարությունների միջև համագործակցության ծրագրերը լավ հիմք են հանդիսանում երկու երկրների կապերի և փոխադրակցության ակտիվացման համար: Տնտեսական և զիրագրենիկական բնագավառներում հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի սփեղման և ակդիվ և արդյունավետ գործունեության շնորհիվ 2008թ. ավելացան երկու երկրների միջև գնդեսական փոխանակումները՝ կյանքի կոչելով համարել մի շարք ծրագրեր:

Հայ-բուլղարական համագործակցության հսկայական հնարավորություններ կան զիտության և մշակույթի բնագավառներում։ Հայերն ու բուլ-

ηωρύνερη τικούια μέσω κουίζ που θα σας δώσει την επίλογο για την απόφαση σας για την περιήγηση στην πόλη.

Երկու երկրների միջև գիտամշակութային հարաբերությունների հիմքը դրվեց 1990ական թվականների 2-րդ կետին կողմերի միջև սպորազրած համաձայնագրով, որի շնորհիվ նրանց միջև այդ բնագավառներում ևս ծավալվեցին ակնառու հարաբերություններ: Դայաստանի Հանրապետության և Բուլղարիայի միջև երկկողմ գիտամշակութային կապերը զարգանում են պայմանագրային հիմքի վրա, կադրարկում են մշակույթի գործիչների փոխայցելություններ, կազմակերպվում են մշակութային բազմաթիվ միջոցառումներ, փառագունդներ և այլն:

Բուլղարիայի կառավարությունը 2004 թվականին Բուլղարիայի Հանրապետությունում անցկացրեց հայկական մշակույթի օրեր: «Բուլղարիայում շաբ ջերմ վերաբերմունք կա հայ համայնքի, հայ ժողովրդի պարմության և մշակույթի նկարմամբ, իսկ Բուլղարահայ համայնքի շաբ ներկայացուցիչներ իրենց գործունեությամբ նպաստել են նաև բուլղարական մշակույթի զարգացմանը, իսկ Բուլղարիան այն երկիրն է որտեղ հայ հերոսների հիշաբակը հավերժացված է հուչարձամների միջոցով», ասել է Բուլղարիայի Հանրապետության վարչապետը:²⁴ Նենց այդ հանդիպման ժամանակ որոշվեց փոխադարձաբար 2008-2009թթ.-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացնել Բուլղարիայի մշակութային օրեր: Դեռևս 2007 թվականի հուլիսի 20-ին երկու երկրների նախագահները Ռ. Քոչարյանը և Գ. Պրվանովը, քննարկել են հայ-բուլղարական մշակութային, կրթական, և գիտական հարաբերությունների զարգացման հարցերը: Բուլղարիայի նախագահը ընդգծել էր մշակույթային և գեղեկարգվական կենքրուններ բացելու անհրաժեշտությունը Երևանում և Սոֆիայում: Իսկ ՀՀ նախագահը՝ բարձր գնահատելով հայ-բուլղարական համագործակցության ներկա մակարդակը, նշել է, որ ավանդական կապերը, հոգևոր մշակույթային ընդհանրություններն ավելի են մերձեցնում երկու երկրներին և ժողովուրդներին: 25 2007 թվականին քաղաքացիության խորհուրդը երեք քաղաքացիություն վերապարապման է ուղարկել Բուլղարիա: 2004-2007 թվականներին երկու երկրների գիտության և կրթության նախարարների փոխայցելությունների արդյունքում համաձայնագիր սփորագրվեց բուհական դիլյուսների փոխադարձ ճանաչման վերաբերող:

Պայմանականորեն միմյանց ընդառաջ գնացող երկու ժողովուրդների մշակութային մերձեցմանը մեծապես նպաստեց նաև Հայաստանում Բուլղարիայի նախկին դեսպան Սպեֆան Դիմիքրովի դեկապարությամբ

հայերեն-բուլղարերեն 800 էջանց բառարանի սփեղծումն ու հրաբարակումը 2007 թվականի վերջին, ինչպես նաև բուլղարերենի ուսուցումը Պեյզ Յավորովի անվան դպրոցի աշակերգների և Սլավոնական համալսարանի ուսանողության կողմից:

Հայ-բուլղարական մշակույթային համագործակցության գարգացման ուղղությամբ կարևոր նշականություն ունեցավ 2008 թվականի հուլիսի 17-ից 20-ը Բուլղարիայի մշակույթի նախարարի գեղակալ Յավոր Միլուշիկ այցը Հայաստան: Այժմ ընթացքում քննարկվեցին հայ-բուլղարական մշակույթային համագործակցության 2009 թվականին Հայաստանում Բուլղարիայի գրարվա մշակույթային միջոցառումների ուղղությունները ինչպես նաև մշակույթի ոլորտում Հայաստանի և Բուլղարիայի կազմակերպությունների և մշակույթային հաստաբությունների միջև ուղիղ կապերի հաստաբման և համագործակցության խնդիրները:

8. Միլուշիկ ՀՀ մշակույթի նախարար գիլիկին Պողոսյանի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին 2008թ. սեպտեմբերի 15-ից 21-ը Բուլղարիայի մշակույթի նախարարության «Արեդե» պատկերասարակում Ա. Փարաջանովի ցուցահանդեսի կազմակերպման մանրամասները, հաջորդ գրարի Հայաստանի Հանրապետությունում կայանալիք Բուլղարիայի գրարվա մշակույթային միջոցառումների ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում Յավորովի արձանը գեղադրելու առաջարկությունը, համարելով կինծորագրեր իրավանացնելու հնարավորությունները և այլն: Առաջարկվեց քննարկել 2008թ. դեկտեմբերին Բուլղարիայում հայկական ազգագրական ցուցահանդես կազմակերպելու հարցը:

9. Միլուշիկ, ով մասնագիրությամբ նաև դերասան է և «ոսկե ծիրան» միջազգային կինոփառադրունին էր ներկայացրել բուլղար բանասիրեղ Պեյզ Յավորովին նվիրված «Գործ 205/1913» խաղարկային ֆիլմը, հանդիպեց նաև կինոփառադրունի կազմակերպիչների, Հայաստանի կինոգրդիչների միության նախագահի և անդամների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համարեղ ֆիլմ նկարահանելու, ինչպես նաև երկու երկրների կինեմատոգրաֆիստների միջև ուղիղ կապեր հաստաբելու խնդիրները:

10. Միլուշիկը հանդիպում ունեցավ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանի հետ, որն իր ողջունի ինոսֆոր հանգամանորեն անդրադապ հայ-բուլղարական բազմադարյան բարեկամությանը, անցած ուղուն, պարմության նոյնանան էջերին, կրթության ու գիտության ոլորտում զարգացման և համագործակցության հեռանկարներին:

«Պարմամշակույթային հարուստ կապեր ունեցող բարեկամ երկու երկրների Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի քաղաքական ակտիվ երկխոսության զարգացման համար ամուր հիմք կլինեն հենց պարմական աղերսները», -նշեց Արամ Սիմոնյանը:²⁶ Հանդիպման ընթացքում քննարկվեցին 2008թ. սեպտեմբերին Երևանում կայանալիք Պեյզ Յավորովի 130-ամյակին նվիրված ներկա գիրաժնողովի մանրամասները: Ա. Սիմոնյանը առաջարկեց պյուն: Միլուշիկն ոչ միայն մասնակցել գիրաժնողովին, այլ հանդես գալ դասախոսությամբ: Բուլղարացի հյուրը առաջարկեց ԵՊՀ հարակից պուրակում գեղադրել Պ. Յավորովի արձանը, որը կապարասարկի և Հայաստան կրեղափոխության Բուլղարիայի Կառավարության կողմից:

Բուլղարիայի մշակույթի նախարարի գեղակալը հանդիպում ունեցավ նաև ՄԿՆՀ-ի (AOKC) հայ-բուլղարական ընկերության անդամների հետ: Հանդիպման ընթացքում առաջարկվեց Հայաստանի Հանրապետությունից Բուլղարիա ուղարկել մանկական հումք, որը կմասնակցի միջազգային մանկական ազգագրական փառագոնին:

Հայաստանյան այցի ընթացքում պարուն Միլուշիկը մասնակցեց «Ուկե ծիրան» միջազգային կինոփառադրունի ծրագրով նախարեւեալած միջոցառումներին, ինչպես նաև այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր և ցեղապահնության թանգարան, Սարդարապատի հուշահամալիր-թանգարան, պարմամշակույթային հուշարձաններ:

Բուլղարիայի մշակույթի փոխնախարարը այցելեց նաև Պ. Յավորովի անվան դպրոց, որտեղ հանդիպում ունեցավ ուսուցչական կազմի հետ և գրքեր նվիրեց դպրոցի Յավորովի գրադարանին: 3. Միլուշիկը ցանկություն հայինեց իր լուման ներդնել դպրոցի վերանորոգման աշխափանքներին և իր ձեռքով գեղադրեց, ասդիճանավանդակի մարմարյա քարերից մեկը: Հանդիպման ավարտին դպրոցի վարչությունը 3. Միլուշիկին հանձնեց Պ. Յավորովի պատկերով դպրոցի հուշամեդալը: Բուլղարիայում, Սոֆիայի արդարադատության արվեստի ազգային պատկերասարակում 2008 թվականի դեկտեմբերի 6-ին բացվելու է Հայաստանի գույներ իսրարգով հայ ժամանակակից նկարիչների ցուցահանդես: Այս մասին այսօվա ասուխտում ասաց մշակույթի նախարարության հասարակության հետ կապերի բաժնի պես Գայանե Դուրզարյանը: Ցուցահանդեսի բացմանը մասնակցելու է Հայաստանի մշակույթի նախարարության պաշտոնական պատվիրակությունը: 4. Դուրզարյանի գեղեկացմամբ, Բուլղարիայի մշակույթի նախարար Սլեֆան Դանայիլովի հրավերով Սոֆիայում սպորտագրվելու է Հայաստանի Հանրապետության

և Բուլղարիայի Հանրապետության կառավարությունների միջև 2007-2009թթ. մշակութային համագործակցության մասին ծրագրի համաձայն խրախուսվելու են թափրոնի, կինոյի, երաժշտության, պարարվեստի, կերպարվեստի, թանգարանային գործի, ճարտարապետության ընազավաններում համագործակցությունը, արվեստի գործիների ու մասնագերների փոխանակումները:²⁷ Ծրագրի շրջանակներում իրագործվելու են երկու երկրներում անցկացվող միջազգային ազգագրական փառարկությունների ու մրցույթների փոխադարձ մասնակցության հրավերները, գրահրադարակչության և թարգմանության ոլորտում համադրել նախագծերի իրականացումը: Նշենք, որ ցուցահանդեսը շարունակվելու է մինչև դեկտեմբերի 16-ը:²⁸ Հայ-բուլղարական հարաբերությունների զարգացման կարևորությունը բացարկվում է նաև Լեռնային Ղարաբաղի հակամարդության կարգավորման հարցում Բուլղարիայի Հանրապետության ունեցած դերով: 2004թ. լինելով ԵԱՌԿ նախագահող երկիր և մասնակցելով Պրահայի գործընթացին՝ Բուլղարիան հարցի լուծումը դիմում է խաղաղ ճանապարհով բանակցությունների միջոցով, այդ նպատակով աշակելով ԵԱՌԿ Մինսկի խմբի աշխարհանքներին:

Արժնորենով փարածաշրջանում խաղաղության և համագործակցության մթնոլորդի առկայությունը ԲՆ վարչապետ Ս. Սկանիշնը 2007թ. նոյեմբերին նշել է, որ «Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման բարդությունը Բուլղարիան շատ լավ զիրակցում է և զիփի, որ դա բաց վերք է Հայաստանի և Ազրբեջանի համար, բազում գոհեր են եղել պատերազմում, մեծ թվով փախարականներ կան: Բայց որքան է բարդ լինեն բանակցությունները, Բալկանների փորձը վկայում է, որ ավելի լավ է փարին 365 օր բանակցել, քան մեկ օր պատերազմել»:²⁹

Ս. Սկանիշնի գնահարմաք՝ այդ գործընթացում կան որոշակի ոիսկեր, մասնավորապես՝ ենելով դնդեսական զարգացումից, Ազրբեջանը ռազմական լուծումներ է որոնում: «Բուլղարիայի մշտական անփոխիս դիրքորոշումն է Լեռնային Ղարաբաղի հակամարդության բացառապես խաղաղ կարգավորումը: Դա պեսք է արվի Հայաստանի և Ազրբեջանի միջև բանակցությունների միջոցով երկրների նախագահների մակարդակով: Որպես ԵԱՌԿ և ԵՄ անդամ, Բուլղարիան աշակցում է ԵԱՌԿ Մնսկի համանախագահներին և Հարավային Կովկասում ԵՄ հագուկ ներկայացուցի ջանքերը հակամարդության կարգավորման ուղղությամբ: Նրանց գործունեությունը երկու կազմակերպությունների անդամ-երկրների, ներառյալ մեր երկիր, խաղաղ ջանքերի արդարայությունը է:

Բուլղարիան կոչ է արել երկու երկրներին զերծ մնալ ռազմագիտն հայրաբարություններից և շահարկումներից: Մենք կարծում ենք, որ հակամարդության ռազմական կարգավորման փորձերն ավելի կրաքացնեն իրավիճակը Հարավային Կովկասում և կունենան բավական բացասական հետքեանքներ փարածաշրջանի կայունության համար, ինչպես նաև Աղրեջանի և Հայաստանի ժողովուրդների համար: Հակամարդության յուրաքանչյուր կողմ պեսք է անի հնարավոր զիջումներ հակամարդության խաղաղ կարգավորման համար», - ասել է ԲՆ վարչապետը:³⁰

ՌԴ-ի արդարին քաղաքականության հիմնական ուղղություններից է հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործնթացի աջակցությունը: Այս ուղղությամբ որոշ ձեռքբերումներ կավարվել են ԲՆ-ում, բայց միայն քաղաքային համայնքների և եկեղեցական Սինոդի մակարդակներով: Այսպես օրինակ 2007թ. դեկտեմբերի 4-ին ԲՆ եկեղեցական Սինոդը ճանաչեց հայոց ցեղասպանությունը և դադասպարբեց այն: Այդ նույն որոշումներն ընդունեցին ԲՆ-ի Ռուսն, Վառնա, Ղրիփով, Բորգաս և Սպառա Զագորիա քաղաքների քաղաքային խորհուրդները: Սակայն Բուլղարիայի խորհրդարանը հրաժարվեց ճանաչել հայոց ցեղասպանությունը: Բուլղարիայի խորհրդարանականները քվեալիցին ցեղասպանությունը ճանաչող երեք օրինագծերի, ինչպես նաև «Օսմանյան կայսրությունում հայ ժողովորի դեմ գործադրված ցեղասպանությունը դարձապարփռ հոչակացի» ընդունման դեմ: Այդ նախագծերը մերժվեցին սոցիալիստների զիսավորած իշխող կուլիցիայի կոմույն, որում ընդգրկված էր նաև թուրքական փոքրամասնության կուսակցությունը: 240 տեղանոց խորհրդարանի միաժին ներկա անդամների 1/3-րդը ձեռնպահ քվեարկեց: «Չեմ կարծում, թե այս դասին կամ կամ պատճենագործ կամ պատճենագործ ավելի քան 1 միլիոն հայերի ֆիզիկական բնաջնջումը, սակայն պատճմական ծշմարդությունը մի բան է, քաղաքականությունը լրիվ այլ բան, քվեարկությունից հետո հայրաբարձեց սոցիալիստ պատճենագործ Ալեքսանդր Շահոսլավկով»:³¹ Բուլղարիան մի քանի անգամ հրաժարվել է ընդունել հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը զգուշանալով իր հարևան Թուրքիայի հետք հարաբերությունների վարժարացման հեռանկարից, քանի որ ԲՆ-ի 8 միլիոն բնակչիներից 800.000-ը ծագումով թուրքեր են, որոնք որոշակի ազդեցություն ունեն ԲՆ-ում: Սակայն բուլղարահայ համայնքը պեսք է ավշիվացնի իր աշխարհանքները այդ ուղղությամբ, որոնք մեր կարծիքով մի օր կասակվեն հաջողությամբ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունները չնայած որոշ խոշընդուների և բաց-

թողումներին, ընդհանում են վերընթաց ուղիով, որոնք հեռանկարում էլ ավելի կարգանան՝ հենվելով երկու ժողովուրդների դարավոր պարմական ճակարտագրերի և հինավորց բարեկամության վրա:

1. «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XVII, Երևան, 1998, էջ 6:
2. «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ, 13 նոյեմբերի 2007:
3. «Հայ Սփյուռք», հանրագիրարան, Երևան, 2003, էջ 128:
4. «Հայ Սփյուռք», հանրագիրարան, էջ 128, 129, 130:
5. Ղասպրյան Զ., Հայ-բուլղարական բարեկամության պարմությունից, Երևան 1978, էջ 43, նույնի Ակնարկներ բուլղարահայ համայնքի պարմության (1876-1970), Երևան 1986, էջ 77:
6. Ղարիբջանյան Գ., Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պարմության, Երևան, 1989, էջ 85:
- 7.Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», օրաթերթ 10 հունվարի 2008:
8. Տե՛ս նույն փեղում:
9. Տե՛ս նույն փեղում, 13 նոյեմբերի 2007:
10. Տե՛ս նույն փեղում:
11. Տե՛ս նույն փեղում, 14 հունիսի 2004:
12. Տե՛ս նույն փեղում, 13 նոյեմբերի 2007:
13. Տե՛ս նույն փեղում, 27 հունիսի 2004:
14. Տե՛ս նույն փեղում:
15. Տե՛ս նույն փեղում, 14 հունիսի 2004:
16. Տե՛ս նույն փեղում, 16 նոյեմբերի 2007:
17. Տե՛ս նույն փեղում:
18. Տե՛ս նույն փեղում, 13 նոյեմբերի 2008:
19. Տե՛ս նույն փեղում, 24 հունիսի 2007:
20. Տե՛ս նույն փեղում, 13 նոյեմբերի 2007:
21. Տե՛ս նույն փեղում, 14 նոյեմբերի 2008:Հայաստանի վիճակագրական փարտ զիրք, Երևան, 2007, էջ 325, 326:
22. Տե՛ս նույն փեղում:
23. Տե՛ս նույն փեղում:
24. Տես «Հայասպանի Հանրապետություն», 13 նոյեմբերի 2007:
25. Տես նույն փեղում, 21 հունիսի 2007:
26. ՀՀ ԱԳ. ընթացիկ արխիվ:
27. Տես «Հայաստանի Հանրապետություն», 14 դեկտեմբերի 2007:
28. Տես նույն փեղում:
29. Տես նույն փեղում:
30. Տես նույն փեղում:
31. ՀՀ Ա.Գ. ընթացիկ արխիվ: